

ք. Երևան

«24» 01 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գառնիկ Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 610-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջրուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման

ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողովի ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **431980470** (չորս հարյուր երեսունմեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից **71996745** (յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուին իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով

նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի սվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև սվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը սվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձևերի փոփոխությանը, որոնք աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 002698732

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ռ

«Բիդեք» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա
Հեռ.՝ (+374) 11-57-55-22, 93-18-99-93
Էլ. Փոստ՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ 00450801

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝



Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝



Գ. Ավետիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1. Կրթական օբյեկտների հիմնանորոգում

(Երևանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարանի հիմնանորոգման աշխատանքներ)

h/h	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Գումարը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
	ԲԱԺԻՆ-1				
	Շիանարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Այլումինե դռների ապամոնտաժում	Մ ²	16.100	3240	52164
2	Փայտե դռների ապամոնտաժում	Մ ²	182.530	1512	275985
3	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում 5,9մ ²	զմ	5.900	540	3186
4	Դռների շեպերի գաջե սվաղի քանդում	Մ ²	67.900	432	29333
5	Փայտե պատուհանների տեղահանում /զոգերով/	Մ ²	377.580	2160	815573
6	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում 109,8մ ²	զմ	109.800	540	59292
7	Այլումինե պատուհանների տեղահանում	Մ ²	4.600	4320	19872
8	Պատուհանների շեպերի գաջե սվաղի քանդում	Մ ²	187.810	432	81134
9	Փայտե վերնափեղկերի քանդում	Մ ²	23.140	2052	47483
10	Մանրահատակի քանդում	Մ ²	1379.47	648	893897
11	ԴՇՈ սալերի քանդում	Մ ²	148.810	378	56250
12	Լամինատե հատակի քանդում	Մ ²	38.890	648	25201
13	Լինեւեմե հատակների քանդում	Մ ²	64.250	216	13878
14	Կերամիկ սալերից հատակների քանդում	Մ ²	68.440	432	29566
15	Շրիշակների քանդում	զմ	1193.12	22	25771
16	Բազալտե աստիճանների ապամոնտաժում	մ ²	8.000	4320	34560
17	Բետոնե խճանկարի քանդում 4սմ հաստությամբ 763,1	մ ³	30.524	17280	527455
18	Ց/ավազե հարթաշերտի քանդում 4սմ հաստությամբ 2321,82մ ²	մ ³	92.873	17280	1604842
19	Փայտատաշեղային շթերի ապամոնտաժում կարկասով	Մ ²	273.050	216	58979
20	Յուղաներկի մաքրում պատերից	Մ ²	1813.06	216	391621
21	Պաստառների պոկում պատերից	Մ ²	715.345	108	77257
22	Ներկի մաքրում պատերից	Մ ²	2339.99	216	505438
23	10սմ հաստությամբ միջնորմների քանդում	Մ ²	237.870	972	231210
24	Հախճասալի քանդում պատերից	Մ ²	151.000	648	97848
25	Ց/ավազե սվաղի քանդում պատերից	Մ ²	60.480	324	19596
26	Ներկի մաքրում առաստաղներից	Մ ²	4058.27	216	876586
27	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	300.902	3780	1137408
	Վերանորոգման աշխատանքներ				
	Մասնաշենք				
	Մասնաշենքի տանիքածածկույթի քանդման աշխատանքներ				
28	Ասբոշիֆերե տանիքածածկույթի քանդում ջրհորդաններով	Մ ²	1060.000	216	228960

29	Տանիքածածկույթի տակ փայտամածի քանդում	մ ³	41.000	21600	885600
30	Ջերմամեկուսիչ շերտի քանդում	մ ³	111.60	3780	421848
31	Զրթող խողովակների քանդում d=150մմ	զմ	80.000	108	8640
32	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	117.130	3780	442751
Մասնաշենքի ամրացման աշխատանքներ					
33	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /հիմքեր/	մ ³	363.000	3240	1176120
34	2-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	47.000	1944	91368
35	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	584.000	3780	2207520
36	Առկա տուֆե պատերի մեջ բնիկների քանդում 500x500մմ , 28տեղ	մ ³	3.500	32400	113400
37	Առաջացած շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	6.000	3780	22680
38	Խճի շերտի պատրաստում բետոնե նախաշերտի տակ 15-20սմ հաստությամբ	մ ³	55.000	14040	772200
39	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ	մ ³	30.500	43200	1317600
40	Ժապավենային հիմքերի ամրացում /ուժեղացում/ ե/բ շապիկով B-25 դասի բետոնից	մ ³	217.000	205200	44528400
41	Ամրանի արժեքը A500c դասի	տն	9.850	421200	4148820
42	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	5.310	496800	2638008
43	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ ²	394.000	1404	553176
44	Հավաքովի ե/բ ծածկի սալերի քանդում	մ ³	34.000	27000	918000
45	Առկա հեծանների մեջ բետոնի քանդում	մ ³	6.400	21600	138240
46	Առաջացած շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	79.000	3780	298620
47	Միաձույլ ե/բ ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	մ ³	7.800	86400	673920
48	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.286	421200	120463
49	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.007	496800	3478
50	B-12,5 դասի թեթև բետոնից շերտի պատրաստում 7սմ հաստությամբ	մ ³	3.600	45360	163296
51	Ե/բ ծածկի սալի ուժեղացում B-25 դասի բետոնից	մ ³	52.800	108000	5702400
52	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	1.851	496800	919577
53	Ամրանային ցանցի արժեքը	տն	3.783	702000	2655666
54	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-25 դասի բետոնից	մ ³	9.400	102600	964440
55	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.800	421200	336960
56	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.188	496800	93398
57	Միաձույլ ե/բ շրջանակի պատրաստում B-25 դասի բետոնից /5տեղ/ (15,3x5)մ ³	մ ³	76.500	118800	9088200
58	Ամրանի արժեքը A500c դասի	տն	6.810	421200	2868372
59	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	4.130	496800	2051784
60	Ներդիր դետալների տեղադրում 15x60x60 թերթապողպատից	տն	0.003	1080000	2808
Նախամուտքի տանիքածածկույթի քանդման աշխատանքներ					
61	Անբոշիֆերե տանիքածածկույթի քանդում ջրհորդաններով	մ ²	95.500	216	20628
62	Տանիքածածկույթի տակ փայտամածի քանդում	մ ³	4.300	21600	92880
63	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	3.917	3780	14807
Տաք անցման տանիքածածկույթի քանդման աշխատանքներ					
64	Հարթ տանիքածածկույթի քանդում 2 շերտ ռուբերոիդից այդ թվում ուղղահայաց մասեր	մ ²	61.000	270	16470
65	Ջերմամեկուսիչ շերտի քանդում	մ ³	6.00	3780	22680

66	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	4.566	3780	17259
Տանիքածածկույթի շին վերանորոգման աշխատանքներ հիմնական մասնաշենք					
67	Կանգնակների տակ միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	4.400	97200	427680
68	Ամրանի արժեքը A500c դասի d=12մմ	տն	0.401	421200	168901
69	Ամրանի արժեքը Ac-1 դասի d=8մմ	տն	0.572	496800	284170
70	Տանիքածածկույթի տակ փայտածածկի իրականացում, մշակված հականեխչով	մ ³	25.000	270000	6750000
71	Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ներկված ց/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով КП-21-0.5մմ /այդ թվում հոծ տախտակամած/	մ ²	828.000	10800	8942400
72	Ջրհորդանների պատրաստում 0,5մմ հարթ ցինկապատ թիթեղից ներկված	մ ²	150.000	15120	2268000
73	Գազաթնագծային թասակների տեղադրում ներկված	մ ²	35.000	9720	340200
74	d=150մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (120գմ) ներկված	կ-տ	15.000	56160	842400
75	Տանիքի արգելաճաղերի տեղադրում	գմ	146.000	7560	1103760
76	Ձայնալուսամուտների իրականացում մ/պլաստ պացվող պատուհան /4հատ/	հատ	2.520	37800	95256
77	Տանիք բարձրացող անցքում մետաղական փոշեներկված կափարիչի տեղադրում	մ ²	0.850	43200	36720
78	Ցեմենտ հարթեցնող շերտի պատրաստում 40մմ հաստությամբ	մ ²	930.000	2592	2410560
79	Տանիքի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոգամից	մ ²	930.000	2160	2008800
80	Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում խարամից 15սմ հաստությամբ	մ ³	139.50	9180	1280610
81	Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ³	25.000	11880	297000
82	Կավարամածի և հոծ տախտակամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ²	828.000	432	357696
83	Կավարամածի և հոծ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	մ ²	828.000	648	536544
Տանիքածածկույթի շին վերանորոգման աշխատանքներ նախամուտք					
84	Կանգնակների տակ միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	0.670	97200	65124
85	Ամրանի արժեքը A500c դասի d=12մմ	տն	0.060	421200	25272
86	Ամրանի արժեքը Ac-1 դասի d=8մմ	տն	0.037	496800	18382
87	Տանիքածածկույթի տակ փայտածածկի իրականացում, մշակված հականեխչով	մ ³	3.000	259200	777600
88	Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ներկված ց/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով КП-21-0.5մմ /այդ թվում հոծ տախտակամած/	մ ²	97.600	10800	1054080
89	Ջրհորդանների պատրաստում 0,5մմ հարթ ցինկապատ թիթեղից ներկված	մ ²	15.600	15120	235872
90	Գազաթնագծային թասակների տեղադրում ներկված	մ ²	3.370	9720	32756
91	d=100մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (14գմ) ներկված	կ-տ	2.000	43200	86400
92	Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ³	3.000	11880	35640
93	Կավարամածի և հոծ տախտակամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ²	97.600	432	42163
94	Կավարամածի և հոծ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	մ ²	97.600	648	63245
Դռներ, պատուհաններ /1-3հարկեր/					
95	Վիտրաժե դուռ ալյումինե պրոֆ. 60 մմ հաստ. ջերմակամրջով, ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ ²	6.970	118800	828036

96	նույնը, չբացվող	մ ²	8.230	64800	533304
97	Վիտրաժե դուռ մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ ²	37.270	70200	2616354
98	նույնը, չբացվող	մ ²	24.630	54000	1330020
99	Դռների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ. ապակեփաթեթով 4 x4 մմ, սպիտակ գույնի, խուլ	մ ²	38.180	59400	2267892
100	Դռների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4 մմ հաստ.	մ ²	118.080	56160	6631373
101	Դռների տեղադրում ՄԴՖ-ի սալից փայտե շրջանակով, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	մ ²	15.610	56160	876658
102	Պատուհանների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, բացվող	մ ²	154.780	43200	6686496
103	նույնը, չբացվող	մ ²	335.880	32400	10882512
104	Պատուհանների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ., ոչ թափանցիկ ապակեփաթեթով 4 x4 մմ հաստ., սպիտակ գույնի, սանհանգույցում, բացվող	մ ²	6.930	48600	336798
105	նույնը, չբացվող	մ ²	13.800	37800	521640
106	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից 45սմ լայնությամբ	մ ²	62.550	1620	101331
107	Պատուհանագոգի արժեքը 45սմ լայնությամբ	գմ	139.000	4860	675540
108	Դռների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ ²	101.450	4320	438264
109	Դռների շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	մ ²	14.670	3240	47531
110	Պատուհանների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ ²	124.530	4320	537970
111	Պատուհանների շեպերի սվաղ ց/ավազե շաղախով	մ ²	17.360	3240	56246
112	Հենաշարժային խնդիրներ ունեցող մարդկանց սանհանգույցներում զուգարանակոնքի մոտ տեղադրել բռնածողեր, նիկելապատ խողովակից ֆ30մմ , 1գմ-2,15կգ	գմ	51.000	7560	385560
113	Առաջին հարկի 6 և 7 սենյակների դռան բացվածքի լայնացման համար քանդված պատի վերականգնում կանոնավթ տուֆ քարով 50 սմ հաստությամբ	մ ³	0.800	30240	24192
114	Նույն բացվածքի ուժեղացում պողպատե անկյունակներով 50 x 50 x 4մմ և շերտավոր պողպատե թիթեղով 40 x 3մմ	տն	0.080	324000	25971
115	պողպատե անկյունակ 50 x 50 x 4մմ	գմ	17.840	2106	37571
116	շերտավոր պողպատե թիթեղով 40 x 3մմ	գմ	18.200	810	14742
117	մետաղական ցանց 150 մմ բծով Br 3 մմ	մ ²	8.000	756	6048
118	խարիսխ A III դասի ֆ 12 մմ ամրանով, 10 հատ 250 մմ երկար.	տն	0.002	540000	1188
119	Ամրացված բացվածքի սվաղ ց/ավազե շաղախով	մ ²	8.200	3240	26568
	1-ին հարկ				
	Հատակներ				
120	Խճի շերտի պատրաստում 7սմ հաստությամբ	մ ³	595.000	14040	8353800
121	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ Bp-4մմ մետաղական ցանցով 150մմ բջիջով	մ ³	85.000	45360	3855600
122	Ամրանային ցանցի տեղադրում Bp-4մմ	տն	1.020	810000	826200
123	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ ²	850.000	2592	2203200
124	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	280.260	9720	2724127
125	Պ/գրանիտե հատակների պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	289.950	14040	4070898

126	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով /որ պակաս 8մմ հաստությամբ, շրիշակը ոչ պակաս 70մմ բարձրությամբ/	մ ²	220.540	7344	1619646
127	Սպորտային ռետինե հատակ պլաստմասե շրիշակներով 55մմ բարձրությամբ	մ ²	63.250	16200	1024650
128	Պ/գրանիտե շրիշակների տեղադրում h=10սմ /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	32.050	16200	519210
	Պատեր				
129	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ ²	127.750	4104	524286
130	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.256	702000	179361
131	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	97.350	2484	241817
132	Պատերի քսահարթում գաջով	մ ²	4153.05	1296	5382353
133	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	4237.30	1944	8237311
134	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ ²	181.600	2160	392256
135	Պատերի երեսպատում հախճասալով	մ ²	181.600	9720	1765152
136	Պատերի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	830.610	2700	2242647
	Առաստաղներ				
137	Առաստաղի քսահարթում գաջով	մ ²	856.480	1404	1202498
138	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	856.480	2052	1757497
139	Կախովի առաստաղների տեղադրում պլաստմասե շերտածողերով	մ ²	30.800	7020	216216
140	Առաստաղի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	171.300	3240	555012
	2-րդ հարկ				
	Հատակներ				
141	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ ²	748.810	2592	1940916
142	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	30.800	9720	299376
143	Պ/գրանիտե հատակների պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	148.440	14040	2084098
144	Լամինատե հատակի պատրաստում շրիշակով և սպունգով /որ պակաս 8մմ հաստությամբ, շրիշակը ոչ պակաս 70մմ բարձրությամբ/	մ ²	569.570	7344	4182922
145	Պ/գրանիտե շրիշակների տեղադրում h=10սմ /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	14.000	16200	226800
	Պատեր				
146	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ ²	115.530	4104	474135
147	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.231	702000	162204
148	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	320.940	2484	797215
149	Պատերի քսահարթում գաջով	մ ²	627.68	1296	813473
150	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	1156.74	1944	2248703
151	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ ²	115.800	2160	250128
152	Պատերի երեսպատում հախճասալով	մ ²	115.800	9720	1125576
153	Պատերի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	134.540	2700	363258
	Առաստաղներ				
154	Առաստաղի քսահարթում գաջով	մ ²	718.000	1404	1008072
155	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	718.000	2052	1473336
156	Կախովի առաստաղների տեղադրում պլաստմասե շերտածողերով	մ ²	30.800	7020	216216
157	Առաստաղի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	143.600	2916	418738
	3-րդ հարկ				
	Հատակներ				

158	40մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ ²	748.950	2592	1941278
159	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	8.800	9720	85536
160	Պ/գրանիտ հատակների պատրաստում /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	185.240	14040	2600770
161	Լամինատ հատակի պատրաստում շրիշակով և սպունգով /որ պակաս 8մմ հաստությամբ, շրիշակը ոչ պակաս 70մմ բարձրությամբ/	մ ²	220.540	7344	1619646
162	Պ/գրանիտ շրիշակների տեղադրում h=10սմ /ոչ պակաս 6մմ հաստությամբ/	մ ²	15.300	16200	247860
Պատեր					
163	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ ²	166.970	4104	685245
164	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.334	702000	234426
165	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	320.940	2484	797215
166	Պատերի քսահարթում գաջով	մ ²	835.80	1296	1083197
167	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	1156.74	1944	2248703
168	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ ²	22.000	2160	47520
169	Պատերի երեսպատում հախճասալով	մ ²	22.000	9720	213840
170	Պատերի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	167.160	2700	451332
Առաստաղներ					
171	Առաստաղի քսահարթում գաջով	մ ²	740.150	1404	1039171
172	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	740.150	2052	1518788
173	Կախովի առաստաղների տեղադրում պլաստմասե շերտածողերով	մ ²	8.800	7020	61776
174	Առաստաղի գաջե սվաղի նորոգում 20%-ի չափով	մ ²	148.030	2916	431655
Վերելակ					
Քանդման աշխատանքներ					
175	Առկա հավքովի ե/բ կլորանցքավոր ծածկի սալերի քանդում	մ ³	5.600	27000	151200
176	Պատերում հեծանների տեղադրման համար անցքերի բացում	մ ³	0.250	86400	21600
177	Վերելակի հիմքերի համար բնահողի քանդում	մ ³	13.800	3240	44712
178	Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	37.660	3780	142355
Վերելակի մեքենայական բաժանմունք					
179	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B20 դասի բետոնով	մ ³	1.360	113400	154224
180	Փ16A500c դասի ամրանի արժեքը	տն	0.119	421200	50123
181	Փ6Acl դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.029	496800	14348
182	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	2.440	97200	237168
183	Փ16A500c դասի ամրանի արժեքը	տն	0.131	421200	55261
184	Փ6Acl դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.037	496800	18382
185	Անցքերի շաղափում Փ18մմ L=500մմ	հատ	16.000	702	11232
186	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B20 դասի բետոնից	մ ³	2.600	81000	210600
187	Փ12A500c դասի ամրանի արժեքը	տն	0.573	421200	241305
188	Փ6Acl դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.003	496800	1252
Վերելակի հիմնակմաղք					
189	Նախապատրաստական շերտի իրականացում B12,5 բետոնով	մ ³	0.900	45360	40824
190	Միաձույլ ե/բ հիմնային հեծանի պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	1.300	91800	119340
191	Փ18A500c դասի ամրանի արժեքը	տն	0.226	421200	95191

192	Φ8AcI դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.150	496800	74520
193	Յեղյուսի տեղադրում	տն	0.072	1944000	140746
194	Միաձույլ ե/բետոնե հիմնային սալի պատրաստում B20 դասի բետոնից	մ ³	4.400	70200	308880
195	Φ12A500c դասի ամրանի արժեքը	տն	0.293	421200	123412
196	Φ10AcI դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.016	496800	7750
197	Միաձույլ ե/բ պատերի պատրաստում B 20 դասի բետոնից	մ ³	4.400	108000	475200
198	Φ12A500c դասի ամրանի արժեքը	տն	0.370	421200	155844
199	Φ10AcI դասի ամրան ամրանի արժեքը	տն	0.001	496800	497
200	Մետաղական հիմնակմաղք և միացնող դետալներ, տեղադրումով	տն	2.000	1026000	2052000
201	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում	մ ²	56.200	1296	72835
202	Նոր վերելակի տեղադրում 3 կանգառով Վերելակի մոնտաժման և վերջնական գործարկման համար անհրաժեշտ բոլոր տեսակի աշխատանքների արժեքը, այդ թվում - Էլեկտրական սարքավորումների մոնտաժում - Ավտոմատ և Էլեկտրոնային սարքավորումների մոնտաժում - կարգաբերման աշխատանքներ - Փորձարկումներ - Շահագործման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումներ - Այլ աշխատանքների տեսակներ	կ-տ	1.000	4285187	4285187
Համաշինարարական աշխատանքներ					
203	20 սմ հաստությամբ պ/բյուրե պատերի շարվածք, անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 24,78	մ ³	4.956	43200	214099
204	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.099	702000	69582
Ներքին թեքահարթակ					
205	B-12,5 դասի բետոնով բուտաբետոնե թեքահարթակի իրականացում	մ ³	3.100	48600	150660
206	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալերով 30 մմ հաստ.	մ ²	10.500	19980	209790
207	Մետաղական նիկելապատ ճաղավանդակի իրականացում	մ	65.000	27000	1755000
Արտաքին թեքահարթակ					
208	B-15 դասի բետոնից արտաքին թեքահարթակի իրականացում	մ ³	0.200	47520	9504
209	Թեքահարթակի երեսապատում բազալտե սալերով 30 մմ հաստ.	մ ²	2.000	19980	39960
Ավտոտնակների և պահեստի տանիքածածկ					
Տանիքային աշխատանքներ					
Ավտոտնակների և պահեստի տանիքածածկ					
Քանդման աշխատանքներ					
210	Ասբոշիֆերե տանիքածածկույթի քանդում ջրհորդաններով	մ ²	235.000	216	50760
211	Տանիքածածկույթի տակ փայտամածի քանդում	մ ³	9.600	21600	207360
212	Ջերմամեկուսիչ շերտի քանդում	մ ³	16.80	3780	63504
213	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	20.713	3780	78293
Տանիքածածկույթի շին վերանորոգման աշխատանքներ					
214	Կանգնակների տակ միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	1.920	91800	176256
215	Ամրանի արժեքը A500c դասի d=12մմ	տն	0.171	421200	72025
216	Տանիքածածկույթի տակ փայտածածկի իրականացում, մշակված հականեխուչով	մ ³	6.900	270000	1863000

217	Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ներկված ց/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով KՌ-21-0.5մմ /այդ թվում հոծ տախտակամած/	մ ²	211.000	12000	2532000
218	Ջրհորդանների պատրաստում 0,5մմ հարթ ցինկապատ թիթեղից ներկված	մ ²	55.600	15120	840672
219	Փագաթնագծային թասակների տեղադրում ներկված	մ ²	4.400	9720	42768
220	d=150մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (ճգմ) ներկված	կ-տ	1.000	45360	45360
221	Ցեմենտե հարթեցնող շերտի պատրաստում 40մմ հաստությամբ	մ ²	250.000	2592	648000
222	Տանիքի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոգամից	մ ²	250.000	2160	540000
223	Ջերմամեկուսիչ շերտի պատրաստում խարամից 15սմ հաստությամբ	մ ³	37.50	9180	344250
224	Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ³	6.900	11880	81972
225	Կավարամածի և հոծ տախտակամածի հակահրդեհային պաշտպանություն	մ ²	211.000	432	91152
226	Կավարամածի և հոծ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	մ ²	211.000	648	136728
	Ավտոտնակներ				
227	Պատերից քայքայված ց/ավազե սվաղի քանդում	մ ²	413.010	324	133815
228	Շին աղբի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	6.195	3780	23418
229	Մետաղական դարպասների ապամոնտաժում /հետագա վերատեղադրումով/	մ ²	93.210	5400	503334
230	Սյունների ուժեղացում պողպատե անկյունակներով 50 x 50 x 4մմ և շերտավոր պողպատե թիթեղով 40 x 3մմ	տն	1.140	324000	369473
231	պողպատե անկյունակ 50 x 50 x 4մմ	զմ	156.000	2106	328536
232	շերտավոր պողպատե թիթեղով 40 x 3մմ	զմ	130.000	810	105300
233	մետաղական ցանց 150 մմ բձձով Br 3 մմ	մ ²	422.610	756	319493
234	խարիսխ A III դասի Φ 12 մմ ամրանով, 10 հատ 250 մմ երկար.	տն	0.204	540000	110160
235	Պատերի և սյուների սվաղ ց/ավազե շաղախով	մ ²	422.610	2160	912838
236	Սվաղված պատերի ներկում ճակատային ներկով, ծեփամածկմամբ	մ ²	422.610	1728	730270
237	Տանիքի բացվածքի շար (ֆրամոգ) կանոնավոր տոֆ քարով 20 սմ հաստ., արտաքին մասը 54,08մ ²	մ ³	10.816	29160	315395
238	Նոր շարված պատի ցվաղ ց/ավազե շաղախով, արտաքին մասը	մ ²	54.080	2160	116813
239	Հատակների նախապատրաստական շերտ բազալտե խճով 5 սմ հաստ. 196 մ ²	մ ³	9.800	14040	137592
240	Բետոնի նախապատրաստական շերտ B 15 դասի բետոնից մետաղական ցանցով Br 4 մմ, 150 մմ բջջով	մ ³	19.600	47520	931392
241	Ամրանային ցանցի տեղադրում Bp-4մմ	տն	0.235	756000	177811
242	Բետոնե խճանկարե հատակների իրականացում 30 մմ հաստ.	մ ²	196.000	8100	1587600
243	Ապամոնտաժված մետաղական դարպասների վեպանորոգում և մոնտաժում	մ ²	93.210	9720	906001
244	Մետաղական դարպասների երկտակ յուղաներկում	մ ²	186.420	1296	241600
245	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ ²	196.000	2916	571536
